ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Կ-426-10.11.2022-ՏՀ-011

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տրանսպորտի մասին» 1998 թվականի փետրվարի 2-ի ՀՕ-201-Ն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7 Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնում են մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, իսկ ներհամայնքային կանոնավոր փոխադրումների դեպքում՝ նաև <<Գնումների մասին>> օրենքի պահանջներին համապատասխան իրականացված գնման գործընթացի միջոցով ընտրված օպերատորի կամ 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից:>>:

Հոդված 2. Եզրափակիչ մաս

1 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տրանսպորտի մասին» 1998 թվականի փետրվարի 2-ի ՀՕ-201-Ն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7 Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնում են մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, իսկ ներհամայնքային կանոնավոր փոխադրումների դեպքում՝ նաև <<Գնումների մասին>> ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքի պահանջներին համապատասխան իրականացված գնման գործընթացի միջոցով ընտրված օպերատորի կամ 100 տոկոս համայնքային մասնակցությամբ ~~կազմակերպության~~ օպերատորի կողմից:>>:

Հոդված 2. Եզրափակիչ մաս

1 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՎ <<ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-426-10.11.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 2, 1-ին մաս**	Շարադրանքից հանել «միասնական» բառը «երթուղիների» բառը փոխարինել «փոխադրումների» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 2, 2-րդ մաս**	Շարադրանքից հանել «միասնական» բառը Շարադրանքից հանել «տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող» և «՝ մրցութային հանձնաժողովի ներկայացմամբ,» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3, 1-ին մաս**	Շարադրանքի 1-ին կետից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

4"	ՀՀ կառավարություն	**Հոդված 3, 2-րդ մաս**	«լինեն մինչև տաս տարվա արտադրության» բառերը փոխարինել «ունենան տասից ոչ ավելի տարիք» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
5"	ՀՀ կառավարություն	**Հոդված 3, 4-րդ մաս**	Շարադրանքի 10-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ «կազմակերպության» բառը փոխարինել «օպերատորի» բառով Շարադրանքի 12—րդ կետում «12 Երթուղու» բառից հետո լրացնել «սպասարկումն իրականացնելու համար սահմանված» բառերը, իսկ «կազմակերպության» բառը փոխարինել «օպերատորի» բառով Շարադրանքի 13-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:, իսկ 13-րդ կետի 2-րդ ենթակետի «երթուղիների ուղևորների» բառերը փոխարինել «փոխադրումներ իրականացնելու համար» բառերով Շարադրանքի 14-րդ կետի «ընտրված օպերատորի դեպքում» բառերից հետո լրացնել «երթուղու սպասարկումն իրականացնելու համար սահմանված» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

6"	ՀՀ կառավարություն	**Հոդված 4, 1-ին մաս**	Հանել «, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի, որը ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակումից չորս ամիս հետո» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
7"	ՀՀ կառավարություն	«Տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 1	Շարադրանքի 10-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ «կազմակերպության» բառը փոխարինել «օպերատորի» բառով	Ընդունվել է	Ընդունվել է